ՀՏԴ 94

Գ.Մ. ՏՈՆՈՅԱՆ

ՍԵՎԾՈՎՅԱՆ ՆԵՂՈՒՑՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(Գյումրի)

1890-ական թթ., սուլթան Աբդուլ Համիդի հետ “բարեկամություն” հաստատելու փորձերին զուգահեռ, ցարական արքունիքը քննարկում էր սևծովյան նեղուցների գրավման խնդիրը, ներկայացված, մասնավորապես, Կ.Պոլսի ռուսական դեսպան Նելիդովի ծրագրերում: Դիտարկված է ռուսական կայսրության այդ հարցում գործնականում դրսևորվող մերժողական դիրքորոշումը, որը պայմանավորված էր տարածաշրջանում տերությունների միջև առկա բարդ մրցակցային հարաբերություններով:

Առանցքային բառեր. սևծովյան նեղուցներ, Ռուսաստան, Օսմանյան կայսրություն, նվաճողական ծրագրեր, ռուս-ֆրանսիական դաշինք:

Ռուսաստանի մերձավորարևելյան քաղաքականության մշտապես կարևոր հիմնախնդիրներից է եղել տարածաշրջանում գերակայության ապահովումը, սևծովյան նեղուցների վերահսկումը: 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո, թվում էր, թե վերափոխվեց ցարիզմի քաղաքական դիրքորոշումը՝ պայմանավորված քաղաքական բարդ գործընթացներով: Ցարիզմը քաղաքական դաշնակցի որոնումների մեջ էր. սպառված էր «Երեք կայսրերի» դաշինքը, խորն էին ռուս-անգլիական հակասությունները, նոր էր սաղմնավորվում ռուս-ֆրանսիական բարեկամությունը: Ռուսաստանի՝ ժամանակի հասարակական շրջաններում, այնուհետև գիտական աղբյուրներում շրջանառվեցին ռուս-թուրքական մերձեցման, մերձավորարևելյան նվաճողական ծրագրերի սառեցման և այս ամենի ազդեցության ներքո դրսևորվող հակահայկականության մասին վարկածները:

Գործնականում Ռուսաստանը վերանայում էր ոչ թե ծրագրերը, նպատակները, այլև ռազմավարական մոտեցումները: Այդ մասին են վկայում բոլոր այն նախագծերը, որոնք ներկայացվել են ռուսական արքունիք Կ.Պոլսի ցարական դեսպան Նելիդովի կողմից: 1892 թ. նոյեմբերին, «հայկական հուզումների և դրանց որպես հետևանք Թուրքիայի ներքին գործերին օտար ուժերի գործնական միջամտության», մասնավորապես՝ անգլիական նավատորմի նեղուցներ ներխուժելու կարծեցյալ վտանգի պատճառաբանությամբ, Ալեքսանդր III - ին ներկայացվեց սևծովյան նեղուցների գրավման հերթական նախագիծը [1, էջ 107]: Թուրքիայի հետ Ռուսաստանի դարավոր պայքարի նման ելքը, ինչպես իր

օրագրում եզրակացնում էր արտգործնախարարության աշխատակից Վ. Ն. Լամզդորֆը, կլիներ ամենաաղետալին՝ ստիպելով ցարիզմին կամ հրաժարվել քաղաքական մեծ նպատակից, կամ՝ երկարատև, չափազանց ծանր ու, դժվար թե հաջող պատերազմներ մղել Օսմանյան կայսրության հետ [2, էջ 251-252]: Անշուշտ, նելիդովյան հիմնավորումներն ընդունելի կլինեին, եթե տրամաբանական հարց չծագեր, թե Ռուսաստանի կողմից նեղուցների գրավումը արդյո՞ք կողջունվեր Թուրքիայի կողմից, և արդյո՞ք չէր հանգեցնի դարձյալ պատերազմի, այս անգամ՝ միավորված Եվրոպայի դեմ, բնականաբար, ցարիզմի համար առավել ծանր ելքով: Այնուամենայնիվ, Նելիդովն առաջարկում էր Կ. Պոլսում լուրջ հուզումների դեպքում ռուսական էսկադրան ուղղել Բոսֆոր, իսկ հնարավորության դեպքում՝ նաև Դարդանել, ապա Թուրքիայի հանդեպ հաստատել պրոտեկտորատ՝ այդ կերպ «հովանավորելով թուրքերին և պաշտպանելով նրանց անկախությունը» [1, էջ 108]: Ռուս-ֆրանսիական հարաբերությունների հնարավոր բարդացման պատճառաբանությամբ նախագիծը քննադատվեց արտաքին գործոց նախարար Ն.Կ. Գիրսի և մերժվեց Ալեքսանդր III – ի կողմից [2, էջ250]:

Ռուսաց պետական այրերի նման դիրքորոշումն ամենևին էլ չէր նշանակում, որ նեղուցները կորցրել էին իրենց նշանակությունը կայսրության համար: Ընդհակառակը, դրանք «ռուսաց տան դռներն էին, և իրական տերը պահանջում էր այդ դռների բանալիները» [3]: Ուղղակի, նշված գերխնդիրը լուծման ժամանակ էր պահանջում, իսկ տվյալ պահին առկա էին զսպող հանգամանքներ, որոնցից մեկը, մասնավորապես, Ռուսաստանի անպատրաստ լինելն էր ռազմական բախման: Ցարական ռազմական ներուժը զիջում էր նեղուցների գրավման հարցում ցարիզմին առաջնահերթ ընդդիմացողներին՝ անգլիական ծովային ուժերին, իսկ ցամաքում՝ գերմանական և ավստրոհունգարական բանակներին [2, էջ 254]:

Պոլսահայության ջարդերի օրերին ռուսական դեսպան Նելիդովը կրկին բարձրացրեց նեղուցների գրավման հարցը՝ հերթական անգամ մերժում ստանալով, այդ անգամ՝ Լոբանով - Ռոստովսկու կողմից: Սակայն թյուր կլինի կարծել, որ նեղուցների գրավման խնդիրը Նելիդովի idee fix – ն էր, քանզի այն իր կողմնակիցներն ուներ կառավարող շրջաններում: Պատահական չէ, որ դեռ 1895 - ի ամռանը, անգլիական նավերի՝ նեղուցներում հայտնվելուց շատ առաջ, ռուսական ռազմական պաշտոնյաներն ամփոփում էին 1891 թ.-ի ծովային ծրագրի իրագործման արդյունքները՝ փաստելով Ռուսաստանի՝ Կ. Պոլսի գրավման պատրաստվածությունը:

Կանխելով Անգլիայի և Ավստրո – Հունգարիայի՝ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու և նեղուցների ռազմական վերահսկողություն կազմակերպելու փորձերը՝ ցարական դիվանագիտությունը Նելիդովի նախաձեռնությամբ, որպես հակամիջոց, առաջարկեց սևծովյան ջրեր ուղարկել վեց տերությունների նավերը՝ սուլթանի վրա «բարոյական ազդեցություն» գործադնելու և քաղաքական բարդություններից խուսափելու նպատակով: Դիվանագիտական այս առաջարկը բնավ խաղաղեցման նպատակ չէր հետապնդում: Նելիդովի նշված ծրագրի իրագործման ճանապարհին ռուսական դիվանագիտությունը կրկին դրսևորեց իր հակասական դիրքորոշումը: Նավերի մուտքը նեղուցներ հետաձգելու, իսկ, հնարավորության դեպքում, նաև կանխելու սուլթանի խնդրանքը [4]՝ Նիկոլայ II -ն Աբդուլ Համիդին հավաստիացրեց "իր անկեղծ բարեկամության" մասին: Ցարը հայտարարեց, թե հաճույքով կընդառաջեր սուլթանին, սակայն անկարելի է հրաժարվել սեփական ծրագրերից, ապա փորձեց նաև հետընթացք տալ ձեռնարկին: Ձախողումից հետո էլ Նիկոլայ II - ը խորհուրդ տվեց Համիդին չհակադրվել տերությունների ձեռնարկած միջոցառումներին, որոնք Թուրքիայի «անվտանգության երաշխիքն էին և խաղաղեցման առաջին քայլը» [2, էջ 310-311]: Ինչևէ, եվրոպական տերությունների համաձայնությամբ ծրագիրը կյանքի կոչվեց: Բ. Դուռն ի վերջո թույլատրեց նավերի մուտքը նեղուցներ: Թվում էր, թե ռուսական դիվանագիտության քայլերը չափազանց անփորձ էին, չմտածված, Լամզդորֆի պատկերավոր արտահայտությամբ՝ նման «ջրին սրով հարվածի» [5, էջ 342-343]: Ըստ էության, այդ գործելակերպը նորընծա ցարի քաղաքական անհետևողականության և ռուսական դիվանագիտության հակասականության բացահայտ դրսևորում էր:

Կ. Պոլսում ռուսական ազդեցության աճի, ռուս - թուրքական համաձայնության և եվրոպական մեկուսացման մտավախությամբ՝ անգլիական կառավարությունը այլընտրանքային տարբերակներ էր որոնում, որոնցից արմատականը Օսմանյան կայսրության անդամահատման, ազդեցության ոլորտների բաժանման առաջարկն էր: Ըստ այդմ Ռուսաստանին բաժին էր հասնելու Արևմտյան Հայաստանը և նեղուցների վերահսկողության իրավունքը: Կրետե կղզին և Եգիպտոսը անցնելու էին Անգլիային, Սիրիան՝ Ֆրանսիային [6, էջ 109-110]: Այդ առաջարկը ռուսաց ցարին կատարվեց Բալմորալում վարչապետ Սոլսբերիի հետ հանդիպման ժամանակ: Զրույցի ընթացքում բարձրացվեցին այնպիսի նուրբ հարցեր, ինչպիսիք էին «օսմանյան ժառանգության», սուլթանի գահընկեցության, Եգիպտոսի և նեղուցների խնդիրները [7, էջ 266-273]: Ինչ վերաբերում է Թուրքիայում իշխանափոխության մտքին, ապա Նիկոլայ II - ը նախ այն գնահատեց որպես «անհրաժեշտ, գործնական քայլ» Թուրքիայում իրավիճակը կար-

գավորելու ուղղությամբ, իսկ հետո, հավանաբար, ռուս դիվանագետների խորհրդով, հրաժարվեց հարկադրական նման միջոցներից: Իսկ գլխավոր խնդրի՝ Թուրքիայի ճակատագրի առնչությամբ ռուս ինքնակալի դիրքորոշումն առաջին հայացքից անհասկանալիորեն անտարբեր էր ու զգուշավոր: Արևելյան հարցի լուծման ավանդական երկու տարբերակներից՝ Թուրքիայի մասնատում կամ status quo - ի պահպանում, ցարական կառավարությունը նախընտրեց երկրորդը: Քաղաքական նման դիրքորոշման մեկնաբանումը ժամանակին տվել էր Լոբանով - Ռոստովսկին. «Այս հարցը մեզ համար ունի առանձնահատուկ նշանակություն՝ Ֆրանսիայի հետ մեր հարաբերությունների և Եգիպտոսում մեր սեփական հետաքրքրությունների պատճառով... Մեր աճող հետաքրքրությունները Հեռավոր Արևելքում համառորեն պահանջում են մեր ռազմական և առևտրական նավերի համար Սուեզի ջրանցքով ցանկացած պահին ազատ անցում ապահովել» [8]: Ակներև է, որ նեղուցների ու Եգիպտոսի հարցերում Ռուսաստանը նախ հաշվի էր նստում իր դաշնակցի շահերի հետ: Ավելին, իր մերձավոր - և հեռավորարևելյան խնդիրների հետ կապված՝ ռուսական դիվանագիտությունը գիտակցում էր, որ Եգիպտոսի և Սուեզի անգլիական գրավումով նեղուցների ձեռքբերումն արժեզրկվում էր, խոչընդոտ ստեղծում Ռուսաստանի ծավալապաշտության և տնտեսական առաջընթացի համար [9, էջ 201]: Ահա թե ինչու Անգլիան պատրաստ էր Ռուսաստանին զիջել թե՛ նեղուցները և թե՛ առաջնությունը Հայկական հարցում՝ վերանայելով Թուրքիայի «պաշտպանի» իր ավանդական դերակատարումը: Ռուսաստանի այս դիրքորոշումն այնքան սկզբունքային էր, որ անգամ դաշնակից Ֆրանսիայի թուրքական հարցերով ռուս - ֆրանս – անգլիական հնարավոր համաձայնության և համատեղ գործողությունների առաջարկն արժանացավ Նիկոլայ II - ի առարկությանը [2, էջ 392]:

Բալմորալյան հանդիպումից քիչ անց, 1896 - ի նոյեմբերին, դեսպան Նելիդովը ցարական կառավարությանը ներկայացրեց «հայկական հուզումների» պատրվակով նեղուցների գրավման նոր նախագիծ [10,էջ 84]: Նիկոլայ II - ը, թվում էր, թե պատրաստ էր իրագործել նշված ծրագիրը՝ իր նախագահությամբ Հատուկ Խորհրդամարմնի ժողով հրավիրելով և քննության առնելով նեղուցների գրավման խնդիրը: Սակայն հեռատես գործիչների, մասնավորապես՝ ֆինանսների նախարար, ռուսական կապիտալի եռանդուն պաշտպան Ս. Յու. Վիտտեի ճնշման ներքո ցարը տեղի տվեց [1]:

Ռուսական դիվանագիտության՝ «կախարդական շրջանում» հայտնվելը, երբ ցարիզմն օբյեկտիվորեն ձգտում էր տեր կանգնել նեղուցներին, իսկ ընձեռված հնարավորության դեպքում՝ հրաժարվել այդ մտքից, որպեսզի հետագայում իրագործեր իր նպատակները զենքի և զոհերի գնով, պայմանավորված էր իմպե-

ռիալիզմի դարաշրջանի քաղաքական զիգզագներով: Ակնհայտ էր, որ ձևավորված երկու հակամետ քաղաքական խմբավորումների պետությունները նախագծում էին հնարավոր համագործակցության նոր կոմբինացիաներ: Ցարիզմի՝ Կ.Պոլիս տանող ճանապարհին կանգնած էին թե՛ Գերմանիան, Ավստրո – Հունգարիան, Անգլիան և թե՛ ռուսաց արքունիքի դաշնակից Ֆրանսիան, որը երեք միլիարդից ավելի գումար էր ներդրել թուրքական փոխառությունների և արդյունաբերության մեջ: Կասեցնելով Ռուսաստանի՝ Կ.Պոլսում մենիշխան հաստատվելու ծրագրերը և պաշտպանելով նեղուցների անձեռնմխելիությունը՝ Ֆրանսիան երաշխավորում էր իր ֆինանսական կապիտալի ամբողջականությունը: Հետևաբար, ռուսական դիվանագիտությունը ռուս - ֆրանսիական դաշինքի կազմալուծման սպառնալիքի և համաեվրոպական պատերազմի վտանգի մտավախությամբ հրաժարվեց "նելիդովյան" ծրագրերից և նախընտրեց խաղաղությունը: Ավելի ուշ նորանշանակ արտաքին գործերի նախարար կոմս Մուրավյովը բանակցեց Ֆրանսիայի վարչապետ Հանոտոյի հետ՝ նշելով, որ Ռուսաստանը "անգլիական տարբերակի" դեպքում պատրաստ է առաջարկել սեփականը՝ անմիջապես հաստատվելով Բոսֆորում և հարակից բարձունքներում, այդ կերպ պատնեշելով դեպի Սև ծով՝ ռուսական «ներքին լիճ» տանող ճանապարհները [11, էջ389]: Ֆրանսիան, որ համաքայլ չէր իր դաշնակցի հետ նեղուցների հարցում, առաջադրեց հետագա համատեղ գործողությունների սեփական ծրագիրը: Վերջինս նախատեսում էր պաշտպանել Թուրքիայի ամբողջականությունը, ստիպել Համիդին կիրառել բարեփոխումներ, իսկ սուլթանի գահազրկման դեպքում՝ համաձայնեցնել ժառանգորդների թեկնածությունը: Միայն այդկերպ հնարավոր էր կանխել անգլիացիների ակտիվությունը օսմանյան Թուրքիայում՝ ապահովելով ռուս-ֆրանսիական գերակայությունը կայսրությունում:

1890 - ականների վերջերին ներքին և արտաքին քաղաքական բարդ հիմնախնդիրները հարկադրում էին ցարական կառավարությանը հնարավորինս սառեցնել Արևելյան հարցը, նրա բոլոր բաղկացուցիչ խնդիրները: Ուստի և 1897 -ի ապրիլին Ռուսաստանը Վիեննայի հետ ձեռք բերեց համաձայնություն նեղուցների ու բալկանյան հարցերում [12,էջ 288-290], իսկ 1898 - ին մերժեց Թուրքիայում և Չինաստանում ռուս - անգլիական ազդեցության գոտիների ստեղծման մասին բրիտանական առաջարկը [13, էջ27-28]:

Իսկ եթե հավելենք, որ չնայած ցարական իշխանությունների 1881թ. և 1895թ. Ռուսաստանի սևծովյան նավատորմի ուժեղացման ծրագրերին՝ ցարիզմը պատրաստ չէր բախվելու ծովային առյուծ Անգլիայի հետ, ապա կբացահայտվի

ռուսական մերձավորարևելյան քաղաքականության մեղմացման ժամանակավոր բնույթը և նեղուցների հարցում նման «պասսիվ» դիրքորոշումը:

Ակնհայտ է, որ 1894 – 1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ ցարական Ռուսաստանը Հայկական հարցին անդրադառնում էր իր մեծապետական շահերի տեսանկյունից՝ այն դիտարկելով որպես միջոց և ոչ թե նպատակ: «Հայկական կոտորածները առիթ ծառայեցնելով՝ ցարը ծրագրում էր գալ և ամրանալ նեղուցներում», իսկ Հայկական հարցը հեշտությամբ շահարկում» տերությունների դիվանագիտական պայքարում:

Ցարական դիվանագիտությունը թե՛ մասնակի՝ հայկական, կրետական, բալկանյան, թե՛ ամբողջական Արևելյան հարցերը ձգտում էր գնահատել որպես Թուրքիայի ներքին խնդիրներ՝ խուսափելով խնդրի միջազգայնացումից, եվրոպական տերությունների համատեղ կամ որևէ մեկ պետության անջատ միջամտությունից: Կ. Պոլսի և նեղուցների նկատմամբ վեց տերությունների համատիրության հաստատման դեպքում ցարիզմը ստիպված կլիներ բավարարվել ազդեցության մեկ վեցերորդ մասով: Ընդսմին, 1890 - ական թթ. վերջերին ևս Ռուսաստանը ցանկանում էր ամեն գնով պահպանել Օսմանյան կայսրության տխրահռչակ status quo - ն, հետաձգել նրա անկումը, ապահովել իր մենիշխան գերակայությունն ու բարձր հեղինակությունը Թուրքիայում: Պատահական չէ, որ ռուսական մամուլը կրկին ձայնարկեց ռուս - թուրքական մերձեցման, անգամ հնարավոր դաշինքի մասին, որով քայքայվող երկիրը կդառնար Ռուսաստանի շահերի, մասնավորապես՝ նեղուցների պահապանը: Ավելին, Ռուսաստանի համար ևս այդ «միությունը» ժամանակավոր արժեք կունենար՝ կիրառվելով որպես հակամիջոց եվրոպական տերությունների հետ մրցապայքարում:

Այսպիսով, վերը բերված փաստերը վկայում եմ, որ Ռուսաստանը օսմանյան Թուրքիայի առնչությամբ բոլորովին էլ պաշտպանական դիրքորոշում չուներ: Սուլթանի հետ«բարեկամություն» ստեղծելու դիվանագիտական քողի տակ հասունանում էին ցարիզմի ծավալապաշտական գաղափարները և զավթողական նպատակները. նեղուցները ամենևին էլ չէին կորցնում իրենց ռազմավարական կարևորությունը 1890-ականների ողջ ընթացքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Хвостов В.** Проблема захвата Босфора в 90-ых гг. 19-го в. // Историк- марксист.- 1930. - Т. 20.
2. **Ламздорф В.Н.** Дневник (1894-1986гг.).- М.: Международные отношения, 1991.- 453с.

3. **Киракосян А.** Англо-русские переговоры 1896г. и Армянский вопрос // Լրաբեր հասարակական գիտությունների.- 1989.- *N* 5.- էջ 69, ծն. 16:
4. **Киракосян А.** Англо-турецкие отношения и вопрос о реформах в Западной Армении, из донесения посла Ф. Карри л. Солсбери // Բանբեր Հայաստանի արխիվների.- 1987.- *N* 3.- էջ 61:
5. **Хвостов В.** История дипломатии.- М.: Госполитиздат, 1963.-Т.2.- 820 с.
6. **Хвостов В.** Ближневосточный кризис 1895-1897 гг. // Историк-марксист.- 1929.- Т. 13.
7. **Проблемы британской истории.-** М.: Наука, 1973.- 295 с. О позиции Солсбери в восточном вопросе осенью 1896 г.; Секретная записка российского посла в Лондоне Е.Е. Стааля о беседе с л-ом Солсбери.
8 **Архив внешней политики Российской империи**, ф. Канцелярия д.128 лл.274-275, Лобанов-Ростовский Стаалю 19/31 марта 1896 г.
9 **Ерусалимский А.С**. Внешняя политика и дипломатия германского империализма в конце 19-го в.- М.: Издательство АН СССР, 1951.- 608 с.
10 **Նավասարդեան Վ.** Նեղուցները (Վոսփոր և Դարդանել), թուրքկան ջրուղիները և հայ դատը.- Գահիրե.- Հուսաբեր, 1947.- 478 էջ:
11 **Ротштейн Ф.А.** Международные отношения в конце 19-го в.- М.-Л.: Издательство АН СССР, 1960.- 705 с.
12 **Восточный вопрос во внешней политике России** (конец 18-го- начало 20-го вв.).- М.: Наука, 1978.- 434 с.
13 **Бондаревский Г.Л**. Английская политика и международные отношения в бассейне Персидского залива (конец 19-го- начало 20-го вв..).- М.: Наука, 1968.- 542 с.

Г.М. ТОНОЯН

ПРОБЛЕМА ЧЕРНОМОРСКИХ ПРОЛИВОВ ВО ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИХ ПРОЕКТАХ РОССИИ В 1890-е ГОДЫ

Несмотря на попытки сближения с турецким султаном в 1890-е гг., царское правительство рассматривало вопрос захвата черноморских проливов, представленный, в частности, в проектах российского посла в Константинополе Нелидова. Проявлявшееся на практике лавирование по данной проблеме было обусловлено соперничеством великих держав на Ближнем Востоке.

Ключевые слова: черноморские проливы, Россия, Османская империя, завоевательные планы, российско-французский союз.

G.M. TONOYAN

THE PROBLEM OF THE BLACK SEA STRAITS IN FOREIGN POLICY PLANS OF RUSSIA IN THE 1890s

Despite the attempts of rapprochement with the Turkish Sultan in the 1890s, the imperial government was considering the capture the straits, presented, in particular, in the projects of the Russian ambassador in Constantinople Nelidov. The maneuvering on this issue in practice was conditioneded by the rivalry of great powers in the Middle East.

Keywords: the Black Sea straits, Russia, the Ottoman Empire, aggressive plans, the Russian-French Alliance.

ՀՏԴ 327.51:341.92

Տ.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՉԵՉԵՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ

Արցախյան հակամարտությունը 20-րդ դարի վերջին հասել էր իր գագաթնակետին, և այդ ամենը զուգորդվեց ԽՍՀՄ-ում գլուխ բարձրացած ազգային հուժկու շարժումներով ու ցնցումներով: Ներկայացված է հակամարտության մեջ Թուրքիայի ունեցած դերակատարումը, ապացուցվում է նաև Կովկասում մուսուլմանական տարբեր ժողովուրդների միավորման փաստը՝ ընդդեմ տեղի քրիստոնյա ազգաբնակչության: Այս վտանգը այսօր ևս առկա է և կարող է ծանր հետևանքներ ունենալ տարածաշրջանում:

Առանցքային բառեր. Հյուսիսային Կովկաս, չեչեն զինյալներ, Թուրքիա, ԼՂՀ հակամարտություն:

ԽՍՀՄ փլուզումից հետո սանձազերծված ռուս-չեչենական հակամարտությունը իր արձագանքներն ունեցավ նաև հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում: Չեչեն գրոհայինները, որոնք վարում էին Ռուսաստանից անջատվելու քաղաքականություն, արագ արձագանքեցին ադրբեջանա-թուրքական կողմի ձեռնարկումներին և օգնության շտապեցին իրենց հավատակիցներին և արցախյան հակամարտության ընթացքում գործուն մասնակցություն ունեցան ադրբեջանցիների սադրիչ գործողություններին՝ ընդդեմ Արցախի:

Ադրբեջանական կողմին աջակցելը չեչենների համար կարևորվում էր երկու հանգամաքով: Չեչեն գրոհայինները ռուսական ուժերի դեմ պայքարում մշտապես օգնություն էին ստանում ադրբեջանական կողմից և ի պատասխան այդ ամենի՝ շտապեցին օգնել իրենց ռազմավարական դաշնակցին: Հաջորդ կարևոր հանգամանքը, որի համար չեչենները մասնակցեցին այս հակամարտությանը, Հյուսիսային Կովկասի անկախությանը միտված թուրք-ադրբեջանա-